

Հաստատված է

Վավերացնում եմ

ՀԱԱՀ գիտական խորհրդում

ոեկտոր

Ա. Թարվերդյան

„-----“, ----- 2016 թ.

„-----“, -----2016 թ.

(արձանագրություն №)

**Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ուսումնական
ծանրաբեռնվածության հաշվարկման և պրոֆեսորադասախոսական անձնակազմի
ուսումնական ծանրաբեռնվածության բաշխման**

ՉՍՓՈՐՈՇԻՉՆԵՐ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի տարեկան ուսումնական ծանրաբեռնվածության հաշվարկման և կազմակերպման համար հիմք ընդունել ներքոհիշյալ չափորոշիչները.

1. Դասախոսությունները վարել հոսքերով, մեկ հոսքի մեջ ընդգրկելով մինչև 60 ուսանող: Առարկայական ծրագրերի համապատասխանության դեպքում, հոսքի մեջ թույլատրել ընդգրկել տարբեր մասնագիտությունների ուսանողների:
2. Գործնական (սեմինար) պարապմունքները կազմակերպել ակադեմիական խմբերով՝ բոլոր մասնագիտությունների համար^a խմբում ուսանողների թվաքանակը սահմանելով 25÷30, իսկ անասնաբուժության և անասնաբուժական սանիտարական փորձաքննություն մասնագիտություններում՝ 16÷20:
3. Լաբորատոր պարապմունքները կազմակերպել ենթախմբերով, բոլոր մասնագիտությունների համար ուսանողների թվաքանակը ենթախմբում սահմանել 12÷15 ուսանող, իսկ «Անասնաբուժություն» և «Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն» մասնագիտություններում՝ 8÷10 ուսանող:

Եթե մասնագիտությունում առկա է մեկ ենթախումբ և գորակոչի, տարկետման, սեփական դիմումով ազատման և այլ պատճառներով ուսանողների թվաքանակը 1-ին կուրսն ավարտելուց հետո փոքր է սահմանված նվազագույն շեմերից, ապա

մասնագիտությունը պահպանելու նկատառումներից ելնելով, բացառության կարգով, ուսանողների թվաքա-նակը ենթախմբում սահմանել առնվազն 7 ուսանող:

4. Դասախոսության, գործնական (սեմինար) և լաբորատոր պարապմունքները կազմակերպել գույգ ժամերով, յուրաքանչյուր ակադեմիական ժամի տևողությունը սահմանելով 45 րոպե, կամ ուսանողների առաջարկությամբ գույգ ժամերը միացնել և ակադեմիական ժամը սահմանել 80 րոպե, իսկ 4-րդ ժամից հետո՝ 70 րոպե:
5. Հաշվարկագրաֆիկական յուրաքանչյուր աշխատանքին հատկացնել 0.25 ժամ, սակայն կիսամյակի ընթացքում, ոչ ավելի քան մեկ ժամ:
6. Խորհրդատվության համար սահմանել հետևյալ ժամաքանակները.
ա) առկա ուսուցման համակարգում՝ առարկայի դասախոսության ժամաքա-նակի 5%-ին գումարած քննական յուրաքանչյուր ենթախմբի համար երկուական ժամ,
բ) հեռակա ուսուցման համակարգում՝ առարկայի համար յուրաքանչյուր ուսանողի հաշվով՝ 0.5 ժամ, իսկ ստուգարքների համար՝ 0.33 ժամ:
7. Քննությունն ընդունելու համար յուրաքանչյուր երկու ուսանողի հաշվով հատկացնել մեկ ժամ, իսկ ստուգարքի համար՝ 3 ուսանողին մեկ ժամ:
8. Միջանկյալ (ընթացիկ) քննությունները անցկացնելու համար սահմանել հետևյալ ժամաքանակները:
Կիսամյակի ընթացքում շաբաթական մեկ ժամ դասախոսություն ունեցող առարկայի համար սահմանել մեկ, 2÷3 ժամ դասախոսության դեպքում՝ երկու, իսկ 4 և ավելի ժամ դասախոսություն ունեցող առարկայի համար 3 միջանկյալ քննություն: Մեկ միջանկյալ քննության (ներառյալ վերա-հանձնման) համար յուրաքանչյուր ուսանողի հաշվով ամբիոնին հատկացնել 0.25 ժամ:
9. Հեռակա ուսուցմամբ սովորող ուսանողի կողմից ներկայացրած յուրա-քանչյուր ստուգողական առաջադրանքի ստուգմանը և ընդունմանը հատ-կացնել 0.5 ժամ:
10. Կուրսային մեկ նախագծի (աշխատանքի) ղեկավարման, ընդունման և պաշտպանության կազմակերպման համար հատկացնել 2.5 ժամ, իսկ քոլեջում 1.5 ժամ:
11. Ուսումնական պրակտիկայի ղեկավարման համար յուրաքանչյուր ակադե-միական խմբին հատկացնել օրական 6-ական ժամ:

12. Արտադրական պրակտիկայի ղեկավարման, հաշվետվության ընդունման և պաշտպանության կազմակերպման համար, յուրաքանչյուր ակադեմիական խմբին հատկացնել 3 ժամ:

13. Դիպլոմային յուրաքանչյուր նախագծին (աշխատանքին) ղեկավարմանը հատկացնել 40 ժամ, իսկ քոլեջում՝ 20 ժամ:

Դիպլոմային յուրաքանչյուր նախագծի (աշխատանքի) պաշտպանության համար պետական որակավորման հանձնաժողովի նախագահին հատկացնել մեկ ժամ, իսկ հանձնաժողովի անդամներին, քննող դասախոսներին և քարտուղարին՝ 0.5-ական ժամ: Յուրաքանչյուր հանձնաժողովում ընդգրկել ոչ ավելի քան 8 անդամ, իսկ քոլեջում՝ 5-6 անդամ:

Յուրաքանչյուր մեկ նախագծի (աշխատանքի) գրախոսմանը հատկացնել 3 ժամ, իսկ քոլեջում՝ 2 ժամ:

Խորհրդատվությանը տրվող ժամաքանակը որոշվում է առաջադրանք տալու ժամանակ (թեմայի հրամանագրումից առաջ), դիպլոմային նախագիծը (աշխատանքը) ղեկավարող և խորհրդատվությունը իրականացնող ամբիոն-ների վարիչների համաձայնությամբ՝ ելնելով մասնագիտության առանձնա-հատկություններից և թեմայի բնույթից:

Դիպլոմային նախագծի (աշխատանքի) համար սամանված մնացած ժամերը հատկացվում են ղեկավարին:

Պետական քննությունները ընդունելու համար պետական որակավորման հանձնաժողովի նախագահին, հանձնաժողովի անդամներին, քննող դասախոսներին և քարտուղարին յուրաքանչյուր քննվող ուսանողի հաշվով հատկացնել 0.5-ական ժամ:

14. Պետական քննական առարկաներից ակնարկային դասախոսությունները անցկացնելու համար հատկացնել յուրաքանչյուր առարկային մինչև 6 ժամ, կախված համալիր հարցաշարում տվյալ առարկայի մասնաբաժնից:

15. Յուրաքանչյուր ասպիրանտի ղեկավարմանը հատկացնել տարեկան 50 ժամ: Ուսուցման ժամկետը ահմանված է՝^a

- առկա ուսուցմամբ - 3 տարի,
- հեռակա ուսուցմամբ և հայցորդին - 4 տարի:

16. Մեկ մագիստրոսի ղեկավարմանը հատկացնել տարեկան 50 ժամ:

17. Համալսարանում ընդհանուր հաստիքների քանակը հաշվարկել ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության նախարարության կողմից 13. 01. 1995թ-ի և ՀԱԱՀ-ի գիտական խորհրդի որոշմամբ հաստատված դասախոս-ուսանող հարաբերակցությամբ՝

- առկա ուսուցմամբ՝ անվճար համակարգում սովորող ուսանողների համար^a 1:7
- վճարովի ուսուցմամբ ուսանողների համար՝ 1:8
- հեռակա ուսուցմամբ ուսանողների համար՝ 1:20:

18. 2010-2011 ուսումնական տարուց սկսած համալսարանի պրոֆեսորադասա-խոսական անձնակազմի տարեկան նորմատիվային աշխատաժամաքանակը սահմանել 1620 ժամ (45 շաբաթ, շաբաթական 36 ժամ): Դասախոսական անձնակազմի տարեկան ուսումնական ծանրաբեռնվածությունը մեկ հաստիքի հաշվով (ներառյալ նաև լրացուցիչ հաստիքային և (կամ) ժամավճարային ժամաքանակը) սահմանել ոչ ավելի քան 1080 ժամ: 1620 ժամ աշխատանքային քանակի մնացած 540 ժամը տրամադրել ուսումնամեթոդական, գիտահետազոտական, փորձարարական ստրուկտորական, կազմակերպամեթոդական և ուսումնական ու գիտական այլ գործընթացների հետ առնչվող աշխատանքներ կատարելու համար:

19. Դասախոսական մեկ հաստիքի ուսումնական միջին ծանրաբեռնվածու-թյունը սահմանել.

19.1 Ընդհանուր կենսաբանության, Գյուղ. կենդանիների մորֆոլոգիայի ֆիզիոլոգիայի և ախտաբանական անատոմիայի, Գյուղ. կենդանիների բուժման և կերակրման, Թերապիայի, ախտորոշաբանության և դեղաբանության, Կենսաքիմիայի, մանրէակենսաբանության և վիրուսաբանության, վիրաբուժության և ծննդագիտության, Ընդհանուր քիմիայի, Ֆիզիկայի և ջերմատեխնիկայի, Բարձագույն մաթեմատիկայի և տեսական մեխանիկայի ու Նյութերի դիմադրության և ճարտարագիտական կառուցվածքների ամբիոնների համար^a 800 ժամ:

19.2 Ագրոէկոլոգիայի, Բուսաբուծության և բանջարաբուծության, Ընդհանուր երկագործության, Հայոց և ռուսաց լեզուների, Օտար լեզուների, Համաճարա-կաբանության և մակաբուժաբանության մասնավոր անասնաբուծության, Սննդի արդ. սարք., Կաշվի և մորթու տեխնոլոգիայի, Ֆիզիկական կուլտուրայի, Գյուղատնտեսական տեխնիկայի շահագործման, Գյուղատնտեսության մեքենաշինության տեխնոլոգիաների և նորոգման, Հայոց պատմության և

փիլիսոփայության, Ինֆորմատիկայի և մաթեմատիկական մեթոդների, Տնտեսագիտության տեսության, Իրավագիտության և քաղաքագիտության ամբիոնների համար՝ 850 ժամ:

19.3 Այգեպտղաբուծության և բույսերի պաշտպանության, Անտառագիտության, Անասնաբուժական սանիտարական փորձաքննության և գոռհիգիենայի, Անասնաբուժական մթերքների և հումքի վերամշակման տեխնոլոգիայի, Բուսաբուժական մթերքների վերամշակման տեխնոլոգիայի, Գյուղատնտեսական մեքենաների, Գյուղ. էլեկտրիֆիկացման, Գրաֆիկայի և մեքենաների նախագծման հիմունքների, Կենսագործունեության անվտանգության, Հիդրոտեխնիկական կառուցվածքների և մելիորացիայի, Հողաշինարարության և հողային կադաստրի, Ագրոբիզնեսի կազմակերպման, Վիճակագրության և բիոմետրիայի, Ագրարային քաղաքականության և խորհրդատվության, Ֆինանսներ և վարկի ամբիոնների համար՝ 900 ժամ:

19.4 Ավտոմոբիլների և տրակտորների, Հաշվապահական հաշվառման և աուդիտի, Ագրոարդյունաբերական համալիրի էկոնոմիկայի, Ագրոբիզնեսի կառավարման, Ապրանքագիտության և մարքեթինգի ամբիոնների համար՝ 950 ժամ:

20. Ամբիոններում հաստիքների քանակը սահմանել էլնելով ամբիոնի ծանրաբեռնվածությունից, 19.1, 19.2, 19.3 և 19.4 կետերով սահմանված միջին ծանրաբեռնվածության նորմաներից ու ամբիոնի փաստացի տարակարգերի համար սահմանված ծանրաբեռնվածությունից:

21. Համալսարանում սահմանել դասախոսական անձնակազմի հետևյալ տարակարգերը՝ պրոֆեսոր, դոցենտ, ավագ դասախոս (ովքեր նախկինում զբաղեցրել են այդ տարակարգը), դասախոս և ասիստենտ:

22. Ամբիոններում դասախոսների հաստիքային տարակարգերը հաստատել ընդհանուր հաստիքների հետևյալ մոտավոր տոկոսային հարաբերակցությամբ.

Տարակարգերը	Մասնագիտական ամբիոններ	Ոչ մասնագիտական ամբիոններ
Պրոֆեսոր	30	20
Դոցենտ	40	20
Ավագ դասախոս	-	20
Դասախոս	15	25
Ասիստենտ	15	15

23. Ըստ տարակարգերի, պահպանելով ամբիոնի միջին ծանրաբեռնվածությունը^ա պրոֆեսորադասախոսական կազմի ուսումնական ծանրաբեռնվածությունը սահմանել հետևյալ ժամաքանակներով^ա

19.1 ենթակետում նշված ամբիոնների համար.

պրոֆեսորի համար	-700 ժամ
դոցենտի համար	-770 ժամ
ավագ դասախոսի համար	-800 ժամ
դասախոսի համար	-840 ժամ
ասիստենտի համար	-890 ժամ

19.2 ենթակետում նշված ամբիոնների համար.

պրոֆեսորի համար	-750 ժամ
դոցենտի համար	-820 ժամ
ավագ դասախոսի համար	-850 ժամ
դասախոսի համար	-890 ժամ
ասիստենտի համար	-940 ժամ

19.3 ենթակետում նշված ամբիոնների համար.

պրոֆեսորի համար	-800 ժամ
դոցենտի համար	-870 ժամ
ավագ դասախոսի համար	-900 ժամ
դասախոսի համար	-940 ժամ
ասիստենտի համար	-990 ժամ

19.4 ենթակետում նշված ամբիոնների համար.

պրոֆեսորի համար	-850 ժամ
դոցենտի համար	-920 ժամ
ավագ դասախոսի համար	-950 ժամ
դասախոսի համար	-990 ժամ
ասիստենտի համար	-1040 ժամ

Ուսումնամեթոդական և գիտահետազոտական աշխատանքները ներգրավված դասախոսների ժամաքանակը սահմանելիս թույլատրել ամբիոնի վարիչներին սույն

կանոնակարգով սահմանված ժամաքանակից նվազեցնել դասախոսի ուսումնական ծանրաբեռնվածությունը^ա ամբիոնի հաստիքների սահմաններում:

24. Դասախոսների լսարանային և ոչ լսարանային ժամաքանակը սահմանելիս, պահպանել ամբիոնի տվյալ ժամաքանակների հարաբերակցությունը:

25. Ուսումնական տարում դասախոսությունների ժամաքանակը սահմանել առնվազն.

ա) պրոֆեսորին^ա 60 ժամ

բ) դոցենտին^ա 40 ժամ

գ) ավագ դասախոսին^ա 30 ժամ

դ) գիտական աստիճան չունեցող դասախոսներին անհրաժեշտության դեպքում, թույլատրել կարդալ դասախոսություն ամբիոնի ներկայացմամբ և ռեկտորի (պրոռեկտորի) համաձայնությամբ, որը ձևակերպվում է համապատասխան հրամանով:

ե) 150 ժամից ավելի դասախոսություն կարդացող դասախոսի տարեկան ուսումնական ծանրաբեռնվածությունը պլանավորել միջինից 10% պակաս (ամբիոնի ընդհանուր հաստիքների հաշվին):

26. Մասնագիտության համակարգողի տարեկան ուսումնական ծանրաբեռնվածությունը սահմանել նորմատիվից 50, իսկ տեղակալին^ա 25 ժամով պակաս (ամբիոնի ընդհանուր ծանրաբեռնվածության և հաստիքների շրջանակներում):

27. Ամբիոնի վարիչի ծանրաբեռնվածությունը սահմանել մեկ հաստիք:

28. Որպես կանոն, դասախոսին տրվում է մեկ հաստիք, սակայն ելնելով ամբիոնի ժամաքանակից դասախոսը համատեղության կարգով կարող է զբաղեցնել ևս մինչև 0.25 հաստիք (կամ մինչև 1080 ժամ):

29. Ուսումնական հաստիքի հետ միաժամանակ թույլատրել կատարելու ժամավճարային աշխատանք հետևյալ ժամաքանակներով^ա չգերազանցելով 1080 ժամը 1,0 հաստիք զբաղեցնողներին^ա մինչև 240 ժամ,

0,75 հաստիք զբաղեցնողներին^ա մինչև 320 ժամ,

0,5 հաստիք զբաղեցնողներին^ա մինչև 350 ժամ,

այլ կազմակերպություններից կամ բուհերից հրավիրվածներին^ա մինչև 350 ժամ:

30. Ամբիոններում, ըստ անհրաժեշտության, ժամավճարային ֆոնդը սահմանել ընդհանուր ժամաքանակի մինչև 3 %-ը:

ՀԻՄՔ^ա

- Համալսարանում պրոֆեսորադասախոսական անձնակազմի ուսումնական ծանրաբեռնվածության բաշխման վերաբերյալ ռեկտորի 2010 թ.-ի մարտի 19-ի հրամանը,

- Համալսարանի գիտական խորհրդի 2010 թ.-ի հունիսի 18-ի և 2011թ-ի մարտի 25-ի որոշումները (արձանագրություն N9և N7),

- Համալսարանի ռեկտորի 2011թ-ի ապրիլի 25-ի հրամանը,

- Հայաստանի ազգային ազրարային համալսարանի ուսումնական ծանրաբեռնվածության հաշվարկման 2013 թ.-ի մայիսի 7-ի գիտական խորհրդում հաստատված «Չափորոշիչները»,

- Համալսարանի գիտական խորհրդի 2014 թ.-ի հուլիսի 17-ի մասնակի որոշումը,

- Համալսարանի գիտական խորհրդի 2015 թ.-ի դեկտեմբերի 24 մասնակի որոշումը:

Սույն «Չափորոշիչները» գործողության մեջ են դրվում 2016 թ.-ի հունվարի 1-ից: